աւարտելուց՝ պետական գիմնազիօնի համար պատրաստուին։ 2 մայիսի. թ. 315.

Կոնդակ օրհնութեան «Մշակ» լրագրի 40-ամեայ յոբելեանը կատարող Յանձնաժողովի անունով։ 7 մայիսի. թ. 338.

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 185. ապրիլի 13-ին Սինօդը լսեց Նորին Բարձր Սրբազնութեան ամենապատիւ Տ. Տեղակալի ապրիլի 2-ի № 2374 առաջադրութիւնը Զանգու գետից Մ. Աթոռի հողերը ոռոգելու ջուր բերելու համար Յանձնաժողով կազմելու մասին. որոշեց. նախ՝ ջրի գործի համար կազմել մի առանձին Յանձնաժողով, որ բաղկացած լինի Սինօդի, Վաղարշապատ, Ալիբէկլու և Զոբանքեարա գիւղերի ներկայացուցիչներից, նաև Բագուի նուիրատուների ներկայացուցչից. երկրորդ՝ Սինօդի կողմից ներկայացուցիչ կարգել Տ. Մեսրոպ եպիսկոպոսին, որ և պիտի լինի նոր կազմուելիք Յանձնաժողովի նախագահը, և երրորդ՝ պատուիրել յիշեալ Յանձնաժողովին գործն աւարտելուց յետոյ մանրամասն հաշիւ ներկայացնել բոլոր փաստաթղթերի և հաշուեմատեանների հետ միասին։

Թ. 192. ապրիլի 11-ին Սինօդը լսեց Վրաստանի Հայոց կոնսիստորիայի 1911 թ. սեպտ. 29-ի № 4675 յայտարարութիւնը Ախալքալակի գաւառի Ղաւուրմա գիւղի բնակիչ Բարդուղիմէոս Էփրիկեանին քահանայ ձեռնադրելու մասին. որոշեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել յիշեալ Էփրիկեանին և առաջադրել թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսին ձեռնադրել նորան քահանայ նոյն գիւղի համար։

Թ. 204. ապրիլի 13-ին Սինօդը լսեց Ղարաբաղի կոնսիստորիայի տարեոյս մարտի 30-ի № 631 յայտարարութիւնը Վարդաշէն գիւղի եկեղեցու գաւթում ծխական

դպրոց շինելու մասին Տփխիսաբնակ Գեներալ-մայիոր Սիլիկեանի ծախքով. որոշեց. թոյլ տալ Գեներալ-մայիոր Ստեփան Սիլիկեանին կառուցանել Վարդաշէն գիւղի եկեղեցու բակում իւր ներկայացրած յատակագծի համեմատ մի շինութիւն ծխական-եկեղեցական դպրոցի կամ եկեղեցու կարիքների համար, ըստ հայեցողութեան Հոգևոր իշխանութեան։ Վճռիս կատարման մասին տալ հրաման Ղարաբաղի Հայոց կոնսիստորիային, պատուիրելով ընդունել յիշեալ շինութիւնը ի սեպհականութիւն Վարդաշէն գիւղի եկեղեցու՝ օրինական կարգով։

Թ. 223. ապրիլի 20-ին Սինոդը լսեց Կիսլովոդսկ քաղաքում Հայոց եկեղեցի և դպրոց շինելու գործը նոյն քաղաքի բնակիչներ Ստեփաննոս Բեշտաուի, Էմմանուէլ Խօջայեանի, Յովակիմ Օշակեանի և Մելքու Թամբիանի նուիրարերած 10,000 ռուբլի արժեցող հողի վրայ. որոշեց. տեղեկութիւն տալով Ասարխանի կոնսիստորիային, որ Թագաւոր Կայսրը բարեհաճել է թոյլ տալ Կիսլավոդսկի Հայոց եկեղեցուն ընդունել Եմելեան Թամբեանի, Էմմանուէլ Խօջայեանի, Ստեփան Բեշտաուի և Արտեմ Օշակեանի նուիրած անշարժ կալուածները, պատուիրել օրէնքով սահմանուած եղանակով ընդունել յիշեալ կալուածներն ի սեպհականութիւն Կիսլավոդսկի Հայոց եկեղեցու։

Թ. 236. ապրիլի 25-ին Սինոդը որոշեց. շրջաբերականով պատուիրել բոլոր կոնսիստորիաներին հրահանգ տալ ստորադրեալ հիմնարկութիւններին և պաշտօնեաներին կատարել ինչպէս անմիջական իշխանութեան, այնպէս և միւս կողմնակի ատեանների և պաշտօնատար անձանց օրինական պահանջները 2—3 շաբաթուայ ընթացքում, իսկ եթէ այդ ժամանակամիջոցում հնարաւորութիւն չի լինի կատարելու այդպիսի պահանջները, տեղեկութիւն տալ դիմողին, թէ մօտաւորապէս երբ կը կատարուի նորա պահանջը. հակառակ դէպքում յանցաւորները ենթակայ են պատասխանատուութեան պատժ. օրինաց 331—337 յօդուածների համաձայն։

Թ. 254. ապրիլի 30-ին Սինոդը լսեց Երևանի փոխ–թեմական տարեոյս ապրիլի 5-ի № 500 յայտարարութիւնը Կարսի Հոգևոր կառավարութեան նախագահ Մինաս քահանային նպաստ տալու մասին. որոշեց. փոխ–թեմական միջնորդութեան համաձայն թոյլ տալ Կարսի Հոգևոր կառավարութեան տալ Մինաս աւագ քահանային 100 ռուբլի նպաստ վիճակային արդիւնքից և չորս ամսականը միանուագ բժշկութեան համար։

Թ. 256. ապրիլի 30-ին Սինոդը լսեց Վրաստանի Հայոց կոնսիստորիայի տարեոյս փետրուարի 23-ի № 668 յայտարարութիւնը Գանձակի վիճակի Բաղա գիւղի եկեղեցու վերանորոգութեան մասին, որոշեց. յանձնարարել Վրաստանի Հայոց թեմի ժամանակաւոր կառավարչին նախապէս խնդրել նահանգական իշխանութեան հաճութիւնը և ապա թոյլ տալ ընտրուած մասնաժողովին կամաւոր դրամական նուէրներ ժողովել թեմում Բաղա գիւղի եկեղեցու նորոգութեան համար, որոշ ժամանակով և որոշ գումար, և այդ նպատակի համար տալ մասնաժողովին ժապաւենեալ մատեան, որի առաջին թերթում գրուած լինի նահանգական և թեմական իշխանութիւնների թոյլտուութեան մասին, հանգանակութեան ժամանակամիջոցը և գումարի որքանութիւնը, պարտաւորացնելով մասնաժողովին ժամանակին հաշիւ ներկայացնել, որպէս ժողոված դրամի, նոյնպէս և նորա գործադրութեան մասին։

— ⁂ —